Կարգապահական գործ թիվ 17048

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի դեկտեմբերի 05-ի թիվ 188-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/115-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Տարոն Սիմոնյանի, Հարություն Հարությունյանի և Սիմոն Բաբայանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մուշեղ Շուշանյանին (արտոնագիր 387) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

03.07.2017թ. Պալատ է մուտքագրվել ՀՀ ոստիկանության **(այսուհետ նաև՝ Դիմող)** պետ Վ. Գասպարյանի դիմումը, որի համաձայն՝ 2017թ. Հունիսի 28-ին Ազատություն ռադիոկայանին տված հարցազրույցի ընթացքում (www.azatutyun.am/a/28584515.html) փաստաբան Մուշեղ Շուշանյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), մեկնաբանելով «Սասնա Ծռեր»-ի գործով դատավարության ընթացքում դատարանի շենքի մոտ հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության ծառայողների գործողությունները, իրավապահ մարմնի հասցեին հնչեցրել է անհարգալից արտահայտություններ:

Վերոնշյալ կայք էջում Մուշեղ Շուշանյանի անունից կատարված հրապարակումն ունի հետևյալ բովանդակությունը. *«Ոստիկանական գործողությունները, որ իրականացվեցին «Սասնա Ծռեր»-ի գործով դատավարության ժամանակ դատարանի շենքի մոտ, ես ոստիկանության հատուկ գործողություն եմ որակում: Որովհետև ակնհայտ սադրիչ գործողությունների էին դիմում, այսինքն՝ առանձին ոստիկաններ հայհոյում էին «Սասնա Ծռեր»-ի հարազատներին, համակիրներին: Ամեն ինչ արվում էր, որ բախումներ հրահրվեն: Պարզ է, որ եթե ոստիկանությունը նպատակ ուներ դիմելու սադրանքի, իրենք իրենց նպատակին հասան», - ասաց փաստաբանը՝ շարունակելով. - «Վարչախումբն ամեն ինչ ձեռնարկում է, փորձում է արհեստական հիմքեր սրեղծել՝ դատավարությունը դռնփակ ռեժիմում անցկացնելու, կամ գոնե դրա հրապարակայնությունը մաքսիմալ նվազեցնելու*

համար: Վարչախումբն ամենից շատ սարսափում է, վախենում է էս դատավարության հրապարակայնությունից, որովհետև սա չի լինելու «Սասնա Ծռեր»-ի դատավարություն, եթե սա լինի հրապարակային դատավարություն, սա լինելու է ռեժիմի դատավարություն:»:

Շուշանյանի խոսքով՝ ««Սասնա Ծռեր»-ի անդամներն իրենց հայտարարություններով իրենք են դատավարություն նախաձեռնելու «էդ վարչախմբի դեմ»: Դրանով է պայմանավորված էս ոչ-ադեկվատ վարքագիծը, պահվածքը, որ նրանք դրսևորում են, իսկ ոստիկանությունը օրենքից դուրս գործող կառույց է: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունն իրավապահ մարմին չէ, զինված հրոսակախումբ է, որը պատրաստ է կատարել ցանկացած հանցավոր հրաման:»:

Դիմողը խնդրել է ստուգել Պատասխանողի արարքում կարգապահական խախտման հատկանիշների առկայությունը և այդպիսիք հայտնաբերելուց հետո Պատասխանողի նկատմամբ կիրառել համարժեք կարգապահական ներգործության միջոց:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Պալատի նախագահի 17.07.2017 թիվ 195-Ա/ԿԳ-17048 որոշմամբ Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր 387) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 21-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործի նախապատրաստումը 19.07.2017թ. հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին: Հիմք ընդունելով, այն հանգամանքը, որ Նարինե Սարգսյանը մեկնելու էր արձակուրդ, նշված կարգապահական գործը 15.09.2017թ. վերահանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին**:**

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանը 27.07.2017թ. ծանուցմամբ առաջարկել է Դիմողին ներկայացնել գրավոր բացատրություններ, ինչպես նաև իր կողմից վկայակոչած փաստերի վերաբերյալ ապացույցներ:

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետը 03.08.2017թ. ներկայացրել է գրավոր բացատրություն, որով վերջինս պնդել է դիմումով ներկայացված դիրքորոշումը, և ներկայացրել azatutyun.am կայքում տեղադրված տեսանյութի լազերային կրիչը: Դիմողը նշել է, որ հիշյալ տեսանյութում 08 րոպե 21վարկ. մինչև 09 րոպե 00 վարկ., փաստաբան Մուշեղ Շուշանյանը, մեկնաբանելով «Սասնա Ծռեր»-ի գործով դատավարության ընթացքում դատարանի շենքի մոտ հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության ծառայողների գործողություններն, իրավապահ մարմնի հասցեին հնչեցնում է հետևյալ արտահայտությունները. «*Ոստիկանությունը արդեն ասեցի օրենքից դուրս գործող կառույց է: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունն իրավապահ մարմին չէ: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը դա զինված*

հրոսակախումբ է: Իրանց գործողությունները հենց այս օրվա գործողությունները, նախորդ տարիների ընթացքում բազմաթիվ էտր հանրային միջոցառումների ժամանակ նրանց վարքագիծը հենց վկայում են դրա մասին: Մենք գործ ունենք զինված հրոսակախմբի հետ, որը պատրաստ է կատարել ցանկացած հանցավոր հրաման:»:

Դիմողը խնդրել է հարուցված վարույթի շրջանակներում ստուգել փաստաբան Մուշեղ Շուշանյանի արարքում կարգապահական խախտման հատկանիշների առկայությունը և դրանց առկայության դեպքում նրա նկատմամբ կիրառել համարժեք կարգապահական ներգործության միջոց:

Խորհրդի նիստին Դիմողը վերահաստատել է իր դիրքորոշումը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Մուշեղ Շուշանյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն:

03.11.2017թ. տացվել է Պատասխանողից գրություն՝ ուղղված Խորհրդին, որի համաձայն՝ Պատասխանողը խնդրել է տրամադրել որոշակի տեղեկություններ և նյութեր, որոնք, ըստ Պատասխանողի անհրաժեշտ են սույն գործի շրջանակներում իր դիրքորոշումը ներկայացնելու համար:

Սույն գործի հանգամանքների վերաբերյալ կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում որևէ բացատրություն Պատասխանողը չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը նշել է, որ, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված արտահայտման ազատությունից, ազատ արտահայտել է իր կարծիքը, որը քննադատական և սուր արտահայտություններ է պարունակել ՀՀ ոստիկանության և նրա գործողությունների վերաբերյալ:

4. **Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձը 19.09.2017թ. կազմել է եզրակացություն (այսուհետ՝ Եզրակացություն), որի համաձայն սույն կարգապահական գործով ապացուցման է ենթակա հետևյալ փաստը.

Արդյոք փաստաբան Մուշեղ Շուշանյանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակներից դուրս այնպիսի հայտարարություններ են կատարվել, որոնք կարող են հանգեցնել վերջինիս իր վստահորդի հետ նույնացմանը, ինչպես նաև կասկածի տակ դնել փաստաբանի մասնագիտության հեղինակությունը:

Համաձայն եզրակացության փաստաբան Մուշեղ Շուշանյանի կողմից նման վարքագիծ դրսևորելու հանգամանքը վկայակոչել է Դիմողը, ուստի Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դրա ապացուցման բեռը վերջինս է կրում: Դիմողի կողմից ի հավաստումն իր վկայակոչած փաստերի ներկայացվել է azatutyun.am կայքում 28.06.2017թ. տեղադրված տեսանյութի լազերային կրիչը: Նախապատրաստողը նշել է, որ կրիչի ուսումնասիրության արդյունքում հաստատվել է փաստաբան Մուշեղ Շուշանյանի կողմից հետևյալ արտահայտությունների կատարված լինելը. ***«Ոստիկանությունը, արդեն ասեցի երևի թե, օրենքից դուրս գործող կառույցա***

ոստիկանությունը: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը իրավապահ մարմին չէ: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը դա զինվո... զինված հրոսակախումբա: Իրանց գործողությունները հենց էսօրվա գործողությունները, նախորդ տարիների ընթացքում բազմաթիվ էդ հանրային միջոցառումների ժամանակ նրանց վարքագիծը հենց վկայում են դրա մասին: Մենք գործ ունենք զինված հրոսակախմբի հետ, որը պատրաստա կատարել ցանկացած հանցավոր հրաման:»: (Տե՛ս տեսանյութի 08 րոպե 21վարկ-ից մինչև 09 րոպե 00 վարկ.):

Նախապատրաստողը վերոհիշյալ ապացույցի հաշվառմամբ հաստատված է համարել այն փաստը, որ փաստաբան Մուշեղ Շուշանյանն արել է վերոհիշյալ հայտարարությունը: Նախապատրաստողը նշել է նաև, որ այդ հայտարարությամբ Մուշեղ Շուշանյանը թույլ է տվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտում, թե՝ ոչ, կարող է որոշել միայն Խորհուրդը:

Եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

22.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի նոյեմբերի 02-ին, ժամը 18:30-ին և 2017 թվականի դեկտեմբերի 05-ին, ժամը՝ 19:45-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի կողմից Եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

Այսպես՝ փաստաբան Մուշեղ Շուշանյանը 28.06.2017թ. «Ազատություն» ռադիոկայանին տրված հարցազրույցում ՀՀ ոստիկանության հասցեին թույլ է տրվել հետևյալ արտահայտությունը.

«Ոստիկանությունը, արդեն ասեցի երևի թե, օրենքից դուրս գործող կառույցա ոստիկանությունը: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը իրավապահ մարմին չէ, Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը դա զինվո... զինված հրոսակախումբա: Իրանց գործողությունները հենց էսօրվա գործողությունները, նախորդ տարիների ընթացքում բազմաթիվ էդ հանրային միջոցառումների ժամանակ նրանց վարքագիծը հենց վկայում են դրա մասին: Մենք գործ ունենք զինված հրոսակախմբի հետ, որը պատրաստա կատարել ցանկացած հանցավոր հրաման:»(Տեսանյութի 08ր. 21վ. մինչև 09ր. 00վ.): Նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով և «Ազատություն» ռադիոկայանի www.azatutyun.am կայքում տեղադրված՝ Մուշեղ Շուշանյանի հարցազրույցի տեսանյութի լազերային կրիչով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Մուշեղ Շուշանյանը փաստաբան է հանդիսանում 28.02.2000 թվականից, և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել **15 (տասնհինգ)** անգամ, որոնցից 3-ն ավարտվել են, իսկ 12-ն՝ ընթացքի մեջ են: Ավարտված կարգապահական վարույթներից 2-ը կարճվել է, իսկ 1-ով Պատասխանողն ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության ձևով՝ Կանոնագրքի 4.1. ենթակետի խախտման համար:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդըգտնում է, որ փաստաբան Մուշեղ Շուշանյանին Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, իսկ Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի խախտման մասով.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝*փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետիհամաձայն՝ *փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):*

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:*

Սույն կարգապահական գործով Խորհրդի քննությանն է ներկայացվել դիմում, որը վերաբերում է Պատասխանողի կողմից Կանոնագրքի վերոնշյալ ենթակետերի առերևույթ խախտմանը՝ Պատասխանողի կողմից խոսքի և կարծիքի ազատության իր իրավունքն իրացնելիս:

Հետևաբար սույն համատեքստում Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք Պատասխանողի կողմից զանգվածային լրատվության միջոցներով նշված բովանդակությամբ հայտարարության հրապարակմամբ խախտել է Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջները:

7.1.1 Արդյո՞ք Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ

սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

ՀՀ սահմանադրության 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծն, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման»** համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով***:

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստրաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստրաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստրաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստրաբանի վարքագծի կանոնագրքի* պահանջները խախտելու համար...:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանն ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի նաև իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Միևնույն ժամանակ փաստաբանը նպաստում է

արդարադատության իրականացմանը և այդ առաքելության շրջանակներում կոչված է ծառայել արդարադատության շահերին: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարաններն ու արդարադատության իրականացմանը նպաստող մարմինները՝ իրավապահ և քննչական մարմինները՝ այդ թվում նաև ՀՀ ոստիկանությունը:

ՀՀ սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:*

ՀՀ սահմանադրության վերոհիշյալ իրավակարգավորման համատեքստում կարելի է եզրահանգել, որ փաստաբանության ինստիտուտը հանդիսանում է ոչ միայն իրավունքի խախտման զոհերի շահերի պաշտպանությանն ուղղված կառուցակարգ, այլև՝ հանրային կարգի ապահովմանը մասնակցող կարևոր ինստիտուտներից մեկը, ում առաքելությունն է նաև նպաստել պետահիշխանական մարմինների կողմից իրենց գործառույթների պատշաճ իրականացմանը և հասարակության ու պետության միջև հարաբերությունների և կապերի ինստիտուցիոնալացմանը: Դա նշանակում է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանությունը փաստաբանի կողմից ոչ թե առանձին դիտարկվող ինքնանպատակ գործառույթ է, այլ այն սերտորեն փոխկապված է պետության ամբողջ կառուցակարգի պատշաճ գործառնման հետ և հանդիսանում է դրա երաշխիքներից մեկը:

Այդ առումով Պալատի կողմից փաստաբանների վարքագծի նկատմամբ վերահսկողության գործառույթը, որն ամրագրված է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, կոչված է ապահովել փաստաբանների վարքագծի համապատասխանությունն իրենց հանրային կոչմանն ու իրավապաշտպան առաքելությանը: Այդ համապատասխանության նորմատիվ չափանիշները պարունակվում են Օրենքում և Պալատի կողմից ընդունված Կանոնագրքում:

Նշված իրավական ակտերի ուսումնասիրությունը փաստում է, որ դրանցում ապահովված է որոշակի հավասարակշռություն փաստաբանի խոսքի ազատության հիմնարար իրավունքի և հանրային կարգի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության լեգիտիմ շահերի միջև: Փաստաբանի խոսքի ազատության իրացման նպատակն իր վստահորդների շահերի գործուն պաշտպանությունն է օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Եթե փաստաբանն իր արտահայտման ազատությունն օգտագործում է ոչ թե այդ նպատակով, այլ այլոց իրավունքները խախտելու, պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու, պետական ինստիտուտների հանրային վարկանիշը նսեմացնելու նպատակով, ապա արտահայտման նման ազատությունը ենթակա է սահմանափակման՝ հանրային գերակայող շահերի պաշտպանությունից ելնելով: Նմանապես, եթե փաստաբանը, ղեկավարվելով իր վստահորդի շահերի պաշտպանության պարտականությամբ, իր խոսքի ազատությունն օգտագործելիս անհիրավաչափ կերպով միջամտում է այլ անձանց իրավունքների իրականացմանը, վիրավորական արտահայտություններ է կատարում պետական ինստիտուտների հասցեին, ապա այստեղ առկա է անհամաչափություն պետության և իրավունքով պաշտպանվող երկու շահի՝ փաստաբանի կողմից իր վստահորդներին իրավաբանական օգնություն ցույց տալու և այլ անձանց, հանրության և պետության լեգիտիմ շահերի իրացման միջև: Սույն պարագայում

ևս փաստաբանի խոսքի ազատությունը կարող է սահմանափակվել:

Հատկանշական է, որ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարին դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունն, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս: Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Սույն համատեքստում աներկբա է այն փաստը, որ փաստաբանական էթիկայի կանոններն ենթադրում են ավելի խիստ կանոններ, քան անգամ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված՝ վիրավորանքի և զրպարտության որակման և պատասխանատվության նորմերը: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներին:

7.1.2 Արդյո՞ք Պատասխանողի կողմից զանգվածային լրատվության միջոցներով նշված բովանդակությամբ հայտարարության հրապարակմամբ խախտել է Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջները:

Սույն կարգապահական գործով Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն էական է համարում հետևյալ հարցադրումները.

-արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողի հասցեին արված արտահայտությունները եղել են հրապարակային:

-արդյո՞ք Պատասխանողի կողմից արված արտահայտությունները կարող են վնասել նրա հեղինակությանը, ազնվությանը և անձեռնմխելիությանը՝ այդպիսով հանգեցնելով իր գործունեությամբ փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստելու փաստաբանի պարտականության չկատարմանը:

Սույն պարագայում Պատասխանողը Դիմողին հասցեագրված արտահայտություններն արել է «Ազատություն» ռադիոկայանին տրված հարցազրույցում, որը նաև ունի համացանցային հեռարձակում www.azatutyun.am կայքի միջոցով: Այսինքն՝ Պատասխանողի՝ Խորհրդի կողմից գնահատման ենթակա վարքագիծը դրսևորվել է զանգվածային հեռարձակման լրատվամիջոցով, որը հասանելի է անսահմանափակ թվով անձանց ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ-ի սահմաններից դուրս:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցադրմանը, ապա Խորհուրդը հարկ է համարում նշել հետևյալը.

Այսպես՝ հանդիսանալով հասարակության հատուկ սուբյեկտ՝ փաստաբանը կոչված է ապահովել անձանց իրավունքների պաշտպանությունը՝ դրանով իսկ լրջագույն դերակատարում ունենալով արդարադատության իրականացման աջակցման գործընթացում: Փաստաբանի կողմից նշված և սահմանադրական մակարդակի բարձրացված դերի և առաքելության պատշաճ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ փաստաբանի վարքագիծը համապատասխանում է նրա հասարակական կարգավիճակին և նպաստում է փաստաբանի և փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Այլ կերպ ասած՝ փաստաբանի վարքագիծը պետք է համահունչ լինի Սահմանադրությանը, օրենքներին, Կանոնագրքի պահանջներին և այդ շրջանակներում նաև հանրային բարոյականության և բարեվարքության կանոններին:

Խորհուրդը գտնում է, որ *յուրաքանչյուր փաստաբան մասնագիտական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում պարտավոր է այնպիսի վարք դրսևորել, որով պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Փաստաբանն ունի պարկեշտ վարք դրսևորելու պարտականություն, որով նա պետք է ձգտի նպաստել իր, այլ փաստաբանների և փաստաբանական ինստիտուտի նկատմամբ հարգանքի ձևավորմանը և հեղինակության բարձրացմանը:*

Պարկեշտ վարքագիծն իր մեջ ներառում է ոչ միայն գրված օրենսդրության նորմերի պահպանումը, այլև Կանոնագրքով սահմանված՝ փաստաբանի մասնագիտական էթիկայի կանոնները և դրանց շրջանակներում բարոյականության, բարեկրթության և բարեվարքության չգրված նորմերը, քանի որ փաստաբանական էթիկան, որպես փաստաբանի վարքագծի՝ Օրենքով և Կանոնագրքով սահմանված վարքագծի կանոնների ամբողջություն, ունի իրավական վերացարկման բարձր մակարդակ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքի իրավական որակման համար Պալատի խորհուրդը պետք է գնահատի ինչպես գործի հանգամանքները, այնպես էլ փաստաբանի կողմից դրսևորված վարքի՝ հանրորեն ընկալելի և ընդունելի վարքագծի կանոններին համապատասխան լինելու հանգամանքը:

Սույն շրջանակներում Խորհուրդն էական է համարում անդրադառնալ փաստաբանի կողմից պետության և պետաիշխանական ինստիտուտների և դրանց գործունեության վերաբերյալ ներկայացվող կարծիքի, գնահատականների, որակումների և խոսքի

ազատության այլ դրսևորումների՝ Օրենքին և Կանոնագրքին համապատասխանության խնդրին:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանը, լինելով արդարադատության իրականացմանը նպաստող սուբյեկտ, ունի երկակի պարտականություն և պատասխանատվություն՝ մի կողմից վստահորդի առջև վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար, իսկ մյուս կողմից՝ հասարակության և պետության առջև՝ մարդու իրավունքների պաշտպանությանը և դատարանի կողմից իր գործառույթների որակյալ կատարմանը նպաստելու առումներով: Փաստաբանը, լինելով միջնորդ քաղաքացիական հասարակության և պետության միջև, ունի հստակ հանրային-իրավական պարտականություններ և դրանցից բխող հանրային-իրավական տարրեր պարունակող կարգավիճակ: Սույն դիրքորոշումը համահունչ է նաև Օրենքի համապատասխան դրույթներին: Մասնավորապես, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝*փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, [որը] հանդիսան[ում][է] քաղաքացիական հասարակության ինստիտուտ*..., իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝*փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է*...: Նշվածից բխում է, որ փաստաբանի վարքագիծը պետական մարմինների հետ հարաբերություններում պետք է համապատասխանի փաստաբանի կոչմանն ու հեղինակությանը և լինի զսպված՝ թելադրված լինելով միմիայն վստահորդի շահերի իրավաչափ պաշտպանության անհրաժեշտությամբ, լինի բարեկիրթ և չպարունակի վստահորդի շահերի պաշտպանության հետ ուղղակիորեն չկապված և վստահորդի պաշտպանությանը չուղղված սուբյեկտիվ-վիրավորական գնահատականներ և որակումներ: Այս մոտեցումը սակայն չի կարող նշանակել, որ փաստաբանը պետք է անհամարձակ կեցվածք դրսևորի:

Վերոնշյալ չափանիշներին համապատասխանող վարքագծի դրսևորմամբ փաստաբանը միաժամանակ նպաստում է փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Հակառակ վարք դրսևորելու դեպքում փաստաբանը վնասում է սեփական հեղինակությանը և դրա հիմքը հանդիսացող ազնվության և անձեռմխելիության սկզբունքներին և չի նպաստում փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը, ինչը հարիր չէ փաստաբանի բարձր կոչմանը:

Խորհուրդը գտնում է, որ Մուշեղ Շուշանյանի հրապարակային խոսքում կան մտքեր, որոնք ոստիկանության հասցեին քննադատություն են պարունակում և կարող են տեղավորվել փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման համատեքստում, ինչն արձանագրվել է նաև Պալատի նախագահի կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման մեջ: Խորհուրդը նույնպես արձանագրում է, որ փաստաբանը չի կարող վախենալ իր վստահորդին պաշտպանելու նպատակով սուր քննադատական խոսք կամ «մեղադրանքներ» հնչեցնելու համար, քանի որ իր դիրքորոշման և առաջ քաշած փաստերի ստուգման միջոցով պետք է պարզվի իրականությունը: Սկզբնական փուլում, երբ հայտնի չեն դեպքի իրական փաստերը բնական է, որ միջադեպի հակառակորդ կողմերի դիրքորոշումները հակասելու են միմյանց:

Խորհուրդը գտնում է, որ օրինակ փաստաբան Մուշեղ Շուշանյանի հետևյալ արտահայտությունները կարող են տեղավորվել այդ համատեքստում.

«Ոստիկանական գործողությունները, որ իրականացվեցին «Սասնա Ծռեր»-ի գործով դատավարության ժամանակ դատարանի շենքի մոտ, ես ոստիկանության հատուկ գործողություն եմ որակում: Որովհետև ակնհայտ սադրիչ գործողությունների էին դիմում, այսինքն՝ առանձին ոստիկաններ հայհոյում էին «Սասնա Ծռեր»-ի հարազատներին, համակիրներին: Ամեն ինչ արվում էր, որ բախումներ հրահրվեն: Պարզ է, որ եթե ոստիկանությունը նպատակ ուներ դիմելու սադրանքի, իրենք իրենց նպատակին հասան:»:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ փաստաբանը պարտավոր է սուր քննադատությունից չանցնել վիրավորական արտահայտությունների: Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Մուշեղ Շուշանյանի խոսքերում առկա են նաև արտահայտություններ, որոնք չեն կարող տեղավորվել փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման համատեքստում: Մասնավորապես, փաստաբան Մուշեղ Շուշանյանն իր խոսքում նշել էր հետևյալը. *«Ոստիկանությունը, արդեն ասեցի երևի թե, օրենքից դուրս գործող կառույցա ոստիկանությունը: **Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը իրավապահ մարմին չէ, Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը դա զինվո... զինված հրոսակախումբա**: Իրանց գործողությունները հենց էսօրվա գործողությունները, նախորդ տարիների ընթացքում բազմաթիվ էպ հանրային միջոցառումների ժամանակ նրանց վարքագիծը հենց վկայում են դրա մասին: Մենք գործ ունենք զինված հրոսակախմբի հետ, որը պատրաստա կատարել ցանկացած հանցավոր հրաման»:*

Խորհուրդը գտնում է, որ ***«Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը իրավապահ մարմին չէ, Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունը դա զինված հրոսակախումբա***» արտահայտությունները չեն կարող տեղավորվել փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման համատեքստում և չեն բխում Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերով սահմանված ամասնավորապես փաստաբանի կարգավիճակին համապատասխանող հեղինակության, ազնվության և անձեռնմխելիության, ինչպես նաև փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստելու պոզիտիվ պարտականության պահանջներից: Փաստաբանը, լինելով իրավաբան և արդարադատության իրականացման գործընթացի կարևոր մասնակից, որոշակիորեն սահմանափակված է իր արտահայտություններում այն իմաստով, որ եթե փաստաբան չհանդիսացող անձն իրավունք ունի շատ ավելի լայն շրջանակներում իրացնել իր խոսքի ազատությունը, ապա փաստաբանը, կրելով իր կարգավիճակից բխող հատուկ պարտականություններ, իր խոսքում առավել սահմանափակված է՝ դրա բովանդակության, ոճի, հասցեականության և հիմնավորվածության առումներով: Ավելին՝ Պատասխանողի խոսքի նշված մեջբերումը վկայում է այն մասին, որ Պատասխանողի վարքագիծն ուղղակիորեն կապված չէր իր վստահորդի շահերի պաշտպանության հետ և ուղղված չէր դրան, ինչը չի տեղավորվում փաստաբանի խոսքի ազատության թույլատրելի շրջանակում:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից չեն պահպանվել Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջները:

7.2 Պատասխանողի կողմից Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի խախտման մասով.

Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը չպետք է նույնացվի իր վստահորդի հետ՝ ելնելով փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարումից:*

Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը չի կարող քննարկման առարկա լինել, քանի որ Օրենքի այդ դրույթը սահմանում է ոչ թե պարտականություն՝ ուղղված փաստաբանին, կամ փաստաբանի ցանկալի վարքագծի կանոն, այլ՝ փաստաբանի գործունեության երաշխիք է: Այսինքն՝ այն վարքագծի կանոն է, որն ուղղված է այլ մարմիններին և անձանց՝ պայմանավորելով վերջիններիս վարքագիծը փաստաբանի նկատմամբ: Եվ նորմի բովանդակությունը հենց այդպես էլ սահմանված է. [**այլ անձանց կողմից**] ‹‹*փաստաբանը չպետք է նույնացվի իր վստահորդի հետ՝ ելնելով փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարումից*››:

Փաստաբանը տեսականորեն կարող է խախտել այս դրույթը, եթե, ելնելով մեկ այլ փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարումից, այդ փաստաբանին նույնացնի վերջինիս վստահորդի հետ:

Իսկ եթե փաստաբանն, ամեն դեպքում, իր մասնագիտական պարտականությունների կատարումից շեղվելով, կատարում է այնպիսի արարք, որն այլ անձանց կողմից իրեն և իր վստահորդին նույնացնելու հիմք է տալիս, ապա այդ փաստաբանը զրկվում է այս Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված երաշխիքից և կրում է անբարենպաստ հետևանքների ռիսկը:

Հետևաբար,Պատասխանողը չէր կարող խախտել այս դրույթը, քանի որ վերջինս, տվյալ դեպքում նշված նորմը խախտող սուբյեկտ չի համարվում:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Խորհուրդը հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Մուշեղ Շուշանյանի նկատմամբ պետք է կիրառել կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ամսվա ընթացքում՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով :

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր թիվ 387) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտման հիմքով հարուցված թիվ ԿԳ 17048 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Մուշեղ Շուշանյանին (արտոնագիր թիվ 387) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր թիվ 387) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով, 6 (վեց) ամսվա ընթացքում 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Տիգրան Խուրշուդյան**

05 դեկտեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/115-Ա
ք. Երևան